



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՊՈՂՈՍՅԱՆԸ ԵՎ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգաղ թիվ 22999/06)

ՎՃԻՌ

ԱՏՐԱՍԲՈՒՐԳ

12 հուլիսի, 2012թ.

ՎԵՐՋՆԱԿԱՆ Է

12/09/2012

Սույն վճիռը վերջնական է դարձել Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:



COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Պողոսյանը և Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Երրորդ Բաժանմունք)

Պալատը, հետևյալ կազմով՝

Josep Casadevall, *Նախագահ,*

Alvina Gyulumyan,

Egbert Myjer,

Ján Šikuta,

Ineta Ziemele,

Luis López Guerra,

Kristina Pardalos, *դատավորներ,*

և Santiago Quesada, *Բաժանմունքի քարտուղար,*

2012 թվականի մայիսի 22-ին կայացած դռնփակ դատական նիստում,

կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Վարույթը հարուցվել է 2006 թվականի մայիսի 16-ին Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») 34-րդ հոդվածի ներքո Հայաստանի Հանրապետության երկու քաղաքացիների՝ պրն. Արմեն Պողոսյանի և տկն. Անահիտ Բաղդասարյանի («դիմումատուներ») կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության բերված թիվ 22999/06 գանգատի հիման վրա:

2. Դիմումատուներին ներկայացրել է Երևանում գործունեություն ծավալող փաստաբան տկն. Ս. Սաֆարյանը: Հայաստանի Հանրապետության Կառավարությունը («Կառավարություն») ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն. Գ.Կոստանյանը:

3. Պրն. Պողոսյանը («առաջին դիմումատու») պնդել է, մասնավորապես, որ իրեն վատ վերաբերմունքի, անօրինական ձերբակալման ու կալանքի, ինչպես նաև անարդարացի դատապարտման հետևանքով ոչ նյութական վնասի փախտահուցում չի տրամադրվել:

4. 2008 թվականի նոյեմբերի 20-ին գանգատն ուղարկվել է Կառավարություն: Որոշվել է նաև իրականացնել գործի ընդունելիության և ըստ էության միաժամանակյա քննություն (29-րդ հոդվածի 1-ին կետ):

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

5. Դիմումատուները ծնվել են համապատասխանաբար 1976 և 1932 թվականներին և բնակվում են Հայաստանում՝ Սարատովկայում:

6. Երկրորդ դիմումատուն առաջին դիմումատուի մայրն է:

7. 1998 թվականի հոկտեմբերի 8-ին առաջին դիմումատուն բերման է ենթարկվել ոստիկանական բաժանմունք՝ բռնաբարություն և սպանություն կատարելու կասկածանքով: Կազմվել և դիմումատուի կողմից ստորագրվել է վերջինիս ձերբակալման արձանագրությունը, որում սպանությունը նշվել է որպես ձերբակալման պատճառ: Ոստիկանական բաժանմունքում առաջին դիմումատուն մի քանի ոստիկանների կողմից ենթարկվել է վատ վերաբերմունքի և ավելի ուշ՝ քննիչի կողմից հարցաքննվելու ժամանակ, տվել է ինքնախոստովանական ցուցմունք:

8. 1998 թվականի հոկտեմբերի 11-ին առաջին դիմումատուի նկատմամբ կիրառվել է կալանք և 1998 թվականի հոկտեմբերի 31-ին նրան պաշտոնապես մեղադրանք է առաջադրվել բռնաբարության և սպանության համար:

9. 1999 թվականի մարտի 29-ին Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանն առաջին դիմումատուին մեղավոր է ճանաչել նրան մեղսագրվող հանցավոր արարքի կատարման մեջ և դատապարտել տասնհինգ տարվա ազատազրկման՝ դատապարտումը հիմնավորելով այդ թվում նաև դիմումատուի ինքնախոստովանությամբ: Այս դատավճիռը Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի և Վճռաբեկ դատարանի կողմից համապատասխանաբար 1999 թվականի մայիսի 20-ին և հունիսի 16-ին թողնվել է օրինական ուժի մեջ: Պարզվում է, որ դատավարությունների ընթացքում առաջին դիմումատուն ապարդյուն պնդել է, որ իր ինքնախոստովանությունը ստացվել է իր նկատմամբ կիրառված վատվերաբերմունքի միջոցով:

10. Կոնվենցիան և դրան կից թիվ 7 Արձանագրությունն այդ պահի դրությամբ Հայաստանի համար մտել էին օրինական ուժի մեջ՝ համապատասխանաբար 2002 թվականի ապրիլի 26-ին և հուլիսի 1-ին:

11. 2003 թվականի նոյեմբերի 24-ին Գլխավոր դատախազությունը բողոք է ներկայացրել առաջին դիմումատուի գործը վերանայելու վերաբերյալ՝ վերջինիս անմեղությունը փաստող նոր երևան եկած հանգամանքների հիմքով: Մասնավորապես, նույնանման հանցագործություն կատարելուց հետո հայտնաբերվել էր դիմումատուին մեղսագրվող հանցավոր արարքների իրական կատարողը: Ավելին, առաջին դիմումատուի

դատապարտումը հիմնավորվել էր օրենքի խախտմամբ ստացված անթույլատրելի ապացույցով:

12. 2004 թվականի ապրիլի 2-ին Վճռաբեկ դատարանը որոշել է բավարարել բողոքը և բեկանել դիմումատուի դատապարտումը՝ քրեական գործն ուղարկելով նոր նախաքննության: Իր որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դիմումատուի դատապարտման վերաբերյալ ի հայտ են եկել նոր հանգամանքներ, որոնք նախկինում հայտնի չեն եղել դատարաններին: Այդ հանգամանքները հիմք են տվել եզրակացնելու, որ առաջին դիմումատուի գործի քննության ընթացքում տեղի են ունեցել սահմանված քրեադատավարական նորմերի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել գործի օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ քննության վրա:

13. 2004 թվականի ապրիլի 17-ին քրեական գործ է հարուցվել քննիչի և մի շարք ոստիկանների նկատմամբ, ովքեր առնչվել են գործի սկզբնական նախաքննությանը: Նրանք մեղադրվել են առաջին դիմումատուին ցուցմունք տալուն հարկադրելու միջոցով իրենց պաշտոնեական լիազորություններն անցնելու մեջ:

14. Նույն օրը առաջին դիմումատուն բնակության վայրը չլքելու մասին ստորագրությամբ ազատ է արձակվել բանտից՝ շուրջ հինգ տարի և վեց ամիս անազատության մեջ մնալուց հետո:

15. 2004 թվականի ապրիլի 29-ին առաջին դիմումատուի նկատմամբ հարուցված քրեական գործը կարճվել է Քրեական դատավարության օրենսգրքի (ՔԴՕ) 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

16. Նույն օրը Գլխավոր դատախազությունը գրություն է ուղարկել առաջին դիմումատուին՝ տեղեկացնելով նրան վերոհիշյալ որոշման և այն մասին, որ այդ օրվանից նա համարվում է «արդարացված» և ունի քաղաքացիական դատավարության կարգով փոխհատուցում ստանալու իրավունք: Գրության մեջ նաև նշվել է, որ Գլխավոր դատախազությունը հայցում է նրա ներողամտությունը դատական սխալի համար:

17. 2004 թվականի մայիսի 6-ին առաջին դիմումատուն ճանաչվել է տուժող: Համապատասխան որոշման մեջ նշվել է, որ ոստիկանների և նախաքննության մարմնի անօրինական գործողությունների հետևանքով նրան պատճառվել է հոգեբանական, ֆիզիկական և նյութական վնաս:

18. 2005 թվականի հունիսի 15-ին Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը ոստիկաններից երկուսին մեղավոր է ճանաչել մեղսագրված արարքների կատարման մեջ՝ դատապարտելով նրանց երեք տարի ազատազրկման՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկու տարի ժամկետով,

բայց կիրառելով համաներում, որը նրանց ազատում էր ազատագրվածան ձևով նշանակված պատիժը կրելուց: Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը նաև նշել է, որ 1998 թվականի հոկտեմբերի 8-ին առաջին դիմումատուն և նրա եղբայրը բերման են ենթարկվել ոստիկանական բաժանմունք, որտեղ առաջին դիմումատուն ոստիկանների կողմից ենթարկվել է վատ վերաբերմունքի՝ ինքնախոստովանական ցուցմունք տալու նպատակով: Երբ առաջին դիմումատուն հրաժարվել է ինքնախոստովանական ցուցմունք տալուց, ոստիկաններից մեկը ձեռքերով և ոտքերով հարվածել է նրան, այնուհետև անօրինական պահել արգելանքի տակ ոստիկանական բաժանմունքում: Նույն օրն ավելի ուշ ոստիկաններից երկուսը շարունակել են ծեծել առաջին դիմումատուին: Նրանցից մեկը երկու ձեռքով հարվածել է նրա ականջներին, որի արդյունքում նրա աջ ականջի թմբկաթաղանթը պայթել է: Այնուհետև նրանք իրենց հետ բերել են շիշ և փորձել դիմումատուին նստեցնել դրա վրա: Մինչույն ժամանակ մեկ այլ ոստիկան կողքի սենյակում ծեծել է առաջին դիմումատուի եղբորը, և նա լսել է եղբոր ճիչերը: Հասկանալով, որ ինքն այդ խոշտանգումներից խուսափելու այլ ճանապարհ չունի, առաջին դիմումատուն ընդունել է իր կողմից սպանության կատարումը: Հաջորդ օրը՝ առաջին դիմումատուին դեպքի վայրի զննության տանելուց առաջ, ոստիկաններից մեկը որպես նախազգուշացում հարվածել է նրան: Այնուհետև՝ 1998 թվականի հոկտեմբերի 14-ին, 16-ին և 19-ին, առաջին դիմումատուն իր խցից տարվել է ոստիկանական բաժանմունք, որտեղ ոստիկանները շարունակել են նրա նկատմամբ վատվերաբերմունք դրսևորել, որպեսզի վերջինս խոստովանի, որ սպանելուց առաջ բռնաբարել է տուժողին, ինչն առաջին դիմումատուն ստիպված է եղել անել՝ ի վիճակի չլինելով դիմանալ խոշտանգումներին:

19. Այս դատավճռի դեմ բողոք չի բերվել:

20. 2004 թվականի սեպտեմբերի 17-ին առաջին դիմումատուն քաղաքացիական հայց է հարուցել դատարան՝ պահանջելով վատվերաբերմունքի, անօրինական կալանքի և դատապարտման արդյունքում իրեն պատճառված նյութական վնասի փախհատուցում՝ 34,050,000 ՀՀ դրամի չափով: Նա վկայակոչել է Կոնվենցիայի 3-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածները:

21. Չպարզված օրը տկն. Բաղդասարյանը («երկրորդ դիմումատու») որպես համահայցվոր ներգրավվել է դատավարությանը՝ պահանջելով առաջին դիմումատուի կողմից հարուցված նյութական վնասի չափի կեսը:

22. Չպարզված օրը առաջին դիմումատուն լրացուցիչ հայց է հարուցել՝ պահանջելով ոչ նյութական վնասի փախհատուցում՝ 60,000,000 ՀՀ դրամի չափով: Նա, մասնավորապես, նշել է, որ չնայած մինչ այդ հայց է հարուցել միայն նյութական վնասի փախհատուցման հիմքով, իրեն իրականում

պատճառվել է ավելի մեծ չափերի ոչ նյութական վնաս: Կոնվենցիայի նախադեպային իրավունքը նշում է, որ նման դեպքերում իրեն պետք է տրամադրվի ոչ նյութական վնասի փոխհատուցում:

23. 2005 թվականի ապրիլի 28-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը մերժել է ոչ նյութական վնասի փոխհատուցման հայցը՝ պատճառաբանելով, որ պատճառված վնասի այդ տեսակը չի նախատեսվում Քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածով: Ընդհանուր իրավասության դատարանը մասնակիորեն բավարարել է նյութական վնասի փոխհատուցման հայցը՝ այդ թվում նաև գտնելով, որ, համաձայն ՔԴՕ 66-րդ հոդվածի, առաջին դիմումատուն, որպես «արդարացված», իրավունք ունի ստանալ անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու և դատապարտման հետևանքով պատճառված նյութական վնասի գույքային հատուցում, և տրամադրելով նրան 6,250,000 ՀՀ դրամ գումար՝ որպես 1998 թվականի հոկտեմբերի 11-ից մինչև 2004 թվականի ապրիլի 17-ն ընկած ժամանակահատվածում բաց թողնված օգուտ: Երկրորդ դիմումատուին տրամադրվել է 1,500,000 ՀՀ դրամ գումար՝ որպես ճանապարհային, ծանրոցներ ուղարկելու և դատական ծախսերի փոխհատուցում:

24. 2005 թվականի մայիսի 12-ին առաջին դիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացրել:

25. 2005 թվականի օգոստոսի 31-ին Քաղաքացիական վերաքննիչ դատարանը մերժել է առաջին դիմումատուի վերաքննիչ բողոքը և օրինական ուժի մեջ է թողել ընդհանուր իրավասության դատարանի վճիռը:

26. 2005 թվականի սեպտեմբերի 16-ին դիմումատուները վճռաբեկ բողոք են ներկայացրել:

27. 2005 թվականի նոյեմբերի 18-ին Վճռաբեկ դատարանը մերժել է դիմումատուների վճռաբեկ բողոքը:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Քաղաքացիական օրենսգիրք (ուժի մեջ է 1999 թվականի հունվարի 1-ից)

28. Քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները սահմանում են.

Հոդված 17: Վնասների հատուցում

«1. Անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

2. Վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ)...»:

Հոդված 1064: Պատասխանատվությունը հետաքննության, նախաքննության մարմինների, դատախազության և դատարանի ապօրինի գործողություններով պատճառված վնասի համար

«1. Ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու, վարչական տույժի ենթարկելու հետևանքով պատճառված վնասը, օրենքով սահմանված կարգով, լրիվ ծավալով հատուցում է Հայաստանի Հանրապետությունը՝ անկախ հետաքննության, նախաքննության, դատախազության և դատարանի պաշտոնատար անձանց մեղքից...»:

Բ. Քրեական դատավարության օրենսգիրք (ուժի մեջ է 1999 թվականի հունվարի 12-ից)

29. Քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթները սահմանում են.

Հոդված 35: Քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ

«1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե...2) արարքի մեջ հանցակազմ չկա ...»:

Հոդված 66: Արդարացվածը

«1. Արդարացված է այն անձը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել կամ քրեական գործով վարույթը կարճվել է սույն օրենսգրքի 35 հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերով և երկրորդ մասով նախատեսված որևէ հիմքով, կամ որի նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ...»:

3. Արդարացվածն իրավունք ունի ... պահանջել իրեն անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու և դատապարտման հետևանքով պատճառված գույքային հատուցում ամբողջ ծավալով՝ հաշվի առնելով իրական հնարավոր բաց թողնված օգուտները...»:

III. ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՓԱՏՏԱԹՂԹԵՐ

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիային կից թիվ 7 Արձանագրության բացատրական զեկույց (ETS No. 117)

30. Բացատրական զեկույցի համապատասխան բաժինները սահմանում են հետևյալը.

Հոդված 3

«22. Այս հոդվածը սահմանում է, որ դատական սխալի զոհին պետք է տրամադրվի փոխհատուցում որոշակի պայմանների բավարարելու դեպքում.

Նախ, գործում ներգրավված անձը պետք է դատապարտված լինի հանցագործության համար օրինական ուժի մեջ մտած դատական ակտով և որպես արդյունք նրա նկատմամբ պետք է նշանակված լինի պատիժ: Համաձայն «Քրեական գործերով դատավճիռների միջազգային վավերականության մասին եվրոպական կոնվենցիայի» վերաբերյալ Եվրոպական կոնվենցիայի բացատրական զեկույցում տրված սահմանման՝ դատական ակտը վերջնական է, «եթե, համաձայն ավանդաբար կիրառվող արտահայտության, այն ձեռք է բերում *res judicata* կարգավիճակ»: Վերը շարադրվածն այն դեպքն է, երբ դատական ակտն անբեկանելի է. այսինքն՝ երբ հետագայում այլևս հասանելի չէ դատական պաշտպանության որևէ սովորական միջոց կամ երբ կողմերը սպառել են նման միջոցները կամ առանց դրանցից օգտվելու բաց են թողել դրանց համար սահմանված ժամկետները»: Շարադրվածից հետևում է, որ դատական ակտը փաստացի չի համարվում վերջնական, քանի դեռ ներպետական օրենսդրությունը նախատեսում է որևէ հետագա դատավարական ընթացակարգ: Նույն ձևով, այս հոդվածը չի վերաբերում այն դեպքերին, երբ պատիժը վերացվում է կամ մեղադրյալը արդարացվում է կա՛մ առաջին ատյանի դատարանի կողմից, կա՛մ բողոքարկման արդյունքում ավելի բարձր դատական ատյանի կողմից: Եթե, այնուամենայնիվ, որևէ երկրում, որտեղ նման հնարավորություն նախատեսված է, անձին բողոքարկման համար սահմանված ընդհանուր ժամկետը բաց թողնելուց հետո դեռևս հնարավորություն է տրվում բողոք բերելու և նրա դատապարտումը բողոքի հիման վրա այնուհետև վերացվում է, ապա հոդվածը կարող է կիրառվել դրա այլ, մասնավորապես՝ ստորև՝ 24-րդ պարբերությամբ նկարագրված պայմաններին համապատասխան:

23. Երկրորդ, հոդվածը կիրառվում է միայն այն դեպքում, երբ անձի դատապարտումը վերացվել է կամ նրան ներում է շնորհվել, կամ այն դեպքում, երբ նոր կամ նոր երևան եկած հանգամանքն անհերքելիորեն ապացուցում է, որ տեղի է ունեցել դատական սխալ, այն է՝ դատավարական ընթացակարգի այնպիսի լուրջ խախտումներ, որոնք դատապարտվածի համար առաջացրել են ծանր հետևանքներ: Այսպիսով, հոդվածը չի պարտավորեցնում տրամադրել փոխհատուցում, եթե դատապարտումը վերացվել է կամ որևէ այլ հիմքով ներում է շնորհվել: Հոդվածը նաև չի սահմանում դատական սխալի կատարման ընթացակարգի բնույթի վերաբերյալ որևէ պայման: Դա համարվում է համապատասխան երկրի ներպետական օրենսդրության կամ պրակտիկայով կարգավորվող հարց: «Կամ նրան ներում է շնորհվել» արտահայտությունը ներառվել է, քանի որ ներում շնորհելու ինստիտուտի շրջանակներում որոշ երկրներում բացի դատապարտման վերացմանն ուղղված իրավական գործընթացներից, որոշ դեպքերում դատական պաշտպանության համապատասխան միջոցներ կարող են սահմանվել նաև այն բանից հետո, երբ կայացվել է վերջնական դատական ակտ:

24. Եվ վերջապես, այս սահմանման ներքո չի տրամադրվում փոխհատուցում, եթե ապացուցվի, որ ժամանակին անհայտ փաստի չներկայացումը ամբողջապես կամ մասամբ մեղադրյալի մեղքն է եղել:

25. Բոլոր այն դեպքերում, երբ այս նախապայմանները առկա են, փոխհատուցումը տրամադրվում է «տվյալ պետության օրենքին կամ պրակտիկային համապատասխան»: Սա չի նշանակում, որ փոխհատուցում չի տրամադրվում, եթե օրենքը կամ պրակտիկան չեն նախատեսում նման հնարավորություն: Սա նշանակում է, որ պետության օրենքը կամ պրակտիկան պետք է ապահովի փոխհատուցման տրամադրումը բոլոր այն գործերով, որոնց վրա տարածվում է սույն հոդվածը: Դրա նպատակը կայանում է նրանում, որ պետությունները պետք է կրեն անձանց փոխհատուցելու պարտավորություն միայն դատական սխալի հստակ առկայության պարագայում, այն իմաստով, որ անձը, ում նկատմամբ այդ սխալը տեղի է ունեցել, եղել է անմեղ: Հոդվածը նպատակ չի հետապնդում փոխհատուցման իրավունքը շնորհել այն դեպքում, երբ բոլոր նախապայմաններն առկա չեն, օրինակ՝ վերաքննիչ դատարանը բեկանել է դատավճիռը, քանի որ հայտնաբերել է որոշակի հանգամանքներ, որոնք ողջամիտ կասկած են առաջացնում ամբաստանյալի մեղավորության վերաբերյալ, որն անտեսվել է առաջին ատյանի դատարանի կողմից:»

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԵՐԿՐՈՐԴ ԴԻՄՈՒՄԱՏՈՒԻ ՏՈՒԺՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

31. Դատարանը նախ անհրաժեշտ է համարում պարզել երկրորդ դիմումատուի՝ տուժողի կարգավիճակ ունենալու հանգամանքը: Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 34-րդ հոդվածում օգտագործված «տուժող» եզրույթը վերաբերում է այն անձին, ում ուղղակիորեն վնաս է պատճառվել խնդրո առարկա գործողության կամ անգործության հետևանքով (տե՛ս, ի թիվս այլոց, *Vatan v. Russia*, թիվ 47978/99, § 48, 2004 թվականի հոկտեմբերի 7):

32. Սույն գործում միայն առաջին դիմումատուն է ենթարկվել վատ վերաբերմունքի ու նախնական կալանքի, ինչպես նաև դատապարտվել է, ինչը հետագայում բեկանվել է: Այսպիսով, Դատարանը համարում է, որ գանգատը երկրորդ դիմումատուի մասով *ratione personae* չի համապատասխանում Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներին և պետք է մերժվի Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն:

33. Դատարանն այսպիսով կսահմանափակվի գանգատում բարձրացված միայն այն բողոքների քննությամբ, որոնք վերաբերում են առաջին դիմումատուին, ում պարզության նկատառումից ելնելով կդիմի որպես «դիմումատու»:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 13-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՎ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԹԻՎ 7 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

34. Դիմումատուն բողոքել է վատ վերաբերմունքի, անօրինական ձերբակալման ու կալանքի և անարդարացի դատապարտման համար իրեն պատճառված ոչ նյութական վնասի փոխհատուցման պահանջը մերժելու մասին: Նա վկայակոչել է Կոնվենցիայի 3-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածները: Դատարանը գտնում է, որ այս բողոքները պետք է քննվեն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի և 13-րդ հոդվածի և Կոնվենցիային կից թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածի ներքո, որոնք սահմանում են հետևյալը.

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետ

«Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման զոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման»:

Կոնվենցիայի 13-րդ հոդված

«Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

Կոնվենցիային կից թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդված

«Եթե որևէ անձ վերջնական դատավճռով մեղավոր է ճանաչվել քրեական հանցագործություն կատարելու մեջ, և եթե հետագայում նրա նկատմամբ կայացված դատավճիռը չեղյալ է հայտարարվել, կամ նա ներման է ենթարկվել այն հիմքով, որ նոր կամ նոր բացահայտված որևէ փաստ համոզիչ կերպով ապացուցում է դատական սխալի առկայությունը, ապա նման դատապարտման հետևանքով պատիժ կրած անձը փոխհատուցում է ստանում տվյալ պետության օրենքին կամ պրակտիկային համապատասխան, եթե չի ապացուցվում, որ ժամանակին այդ փաստը չբացահայտելը լիովին կամ մասամբ կախված չի եղել տվյալ անձից»:

Ա. ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

35. Դատարանը նշում է, որ հարց կարող է առաջանալ, թե արդյո՞ք դատարանն ունի ժամանակային իրավասություն քննել դիմումատուի գանգատի հանգամանքները՝ հաշվի առնելով այն, որ նրա նկատմամբ վատ վերաբերմունքին, անօրինական ձերբակալմանն ու կալանքին և անարդարացի դատապարտմանը վերաբերող՝ Կոնվենցիայի 3-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածների ներքո բերված բողոքները դուրս են Դատարանի *ratione temporis* իրավասությունից (տե՛ս ստորև՝ §§ 55-57): Դատարանն, այնուամենայնիվ, գտնում է, որ, դիմումատուի նկատմամբ վատ

վերաբերմունքը, ոստիկանների դատապարտումը և դրանց հաջորդող՝ վնասի փոխհատուցման գործընթացները տեղի են ունեցել Հայաստանի նկատմամբ Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո: Դատարանն այսպիսով արձանագրում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի և 13-րդ հոդվածի և Կոնվենցիային կից թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածի ներքո դիմումատուի կողմից բերված բողոքները մտնում են Դատարանի՝ *ratione temporis* իրավասության ներքո:

36. Դատարանը նշում է, որ այս բողոքներն ակնհայտորեն անհիմն չեն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետի իմաստով: Այնուհետև այն նշում է, որ դրանք որևէ այլ հիմքով անընդունելի չեն: Հետևաբար դրանք պետք է հայտարարվեն ընդունելի:

Բ. ԳՈՐԾԻ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Կողմերի փաստարկները

(ա) Կառավարությունը

37. Կառավարությունը 5-րդ հոդվածի 5-րդ կետի ներքո պնդել է, որ տվյալ հոդվածի նշված կետը ենթադրում է 5-րդ հոդվածի մեկ կամ մի քանի դրույթների խախտումներ, որոնք տվյալ դեպքում բացակայում են: Դիմումատուի ձերբակալումը և կալանքը քննարկվող ժամանակահատվածում չեն իրականացվել 5-րդ հոդվածի խախտմամբ, քանի որ ներպետական դատարանները գործել են օրենքին համապատասխան: Տեղի չի ունեցել 5-րդ հոդվածի 1-ին կետի (ա) ենթակետի խախտում, քանի որ դիմումատուին ձերբակալելու հիմքը եղել է նրան իրավասու մարմնին ներկայացնելը՝ բռնաբարություն և սպանություն կատարելու կասկածանքով: Քննարկվող ժամանակահատվածում ներպետական դատարանն իր տրամադրության տակ չի ունեցել այնպիսի ապացույցներ, որոնք կարդարացնեին այլ որոշման ընդունումը: Չի եղել 5-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում, որովհետև դիմումատուն ստորագրել է իր ձերբակալման արձանագրությունն այն օրը, երբ բերման է ենթարկվել ոստիկանություն, հետևաբար նա ակնհայտորեն տեղյակ է եղել իր ձերբակալման պատճառի մասին: Այսպիսով, տեղի չեն ունեցել նաև 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի խախտումներ:

38. Կառավարությունն այնուհետև պնդել է, որ հետագայում դիմումատուի դատապարտման վերացումը և նրա դեմ հարուցված քրեական գործի վարույթի կարճումը նրա ձերբակալումն ու կալանքը 5-րդ հոդվածի խախտմամբ չեն կատարվել, քանի որ դրանք կիրառվել էին այդ հոդվածի

պահանջներին համապատասխան և հիմնավոր կասկածի առկայության պայմաններում:

39. Կառավարությունը նաև 13-րդ հոդվածի կապակցությամբ պնդել է, որ պատշաճ փոխհատուցումը հասանելի է եղել դիմումատուին: Մասնավորապես, նոր փաստերի հայտնաբերումից անմիջապես հետո ոստիկանների նկատմամբ հարուցվել է քրեական գործ, դիմումատուին տրվել է տուժողի կարգավիճակ, ոստիկանները դատապարտվել են, դիմումատուի նկատմամբ հարուցված քրեական գործը կարճվել է և նյութական վնասի փախհատուցման վերաբերյալ նրա քաղաքացիական հայցը բավարարվել է: Ավելին, Գլխավոր դատախազությունը պաշտոնական գրությամբ հայցել է դիմումատուի ներողամտությունը դատական սխալի համար: Ավելին, քննարկվող գործի փաստական համգամանքները տարբերվում են *Keenan v. the United Kingdom* (թիվ 27229/95, § 130, ՄԻԵԴ 2001-III) և *Kontrová v. Slovakia* (թիվ 7510/04, § 64, 2007 թվականի մայիսի 31) գործերում առկա հանգամանքներից, քանի որ տվյալ գործում չի առաջացել խնդիր 3-րդ հոդվածի ներքո:

40. Եվ վերջապես, Կառավարությունը թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածի առնչությամբ պնդել է, որ դիմումատուին տրամադրվել է համարժեք փոխհատուցում: Մասնավորապես, նրան տրվել է նյութական վնասի փոխհատուցում, և նա Գլխավոր դատախազությունից ստացել է պաշտոնական ներողություն, որը պետք է համարել ոչ նյութական վնասի համարժեք փոխհատուցում: Ավելին, թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածը նախատեսում է փոխհատուցման տրամադրում համապատասխան երկրի օրենքով և պրակտիկայով սահմանված կարգով: Այսպիսով, ներողության ձևով տրված փոխհատուցումը, որը նա ստացել է բարոյական վնասի համար, չի եղել կամայական, քանի որ առկա է եղել այդպիսի փորձ նմանատիպ իրավիճակներում:

(բ) Դիմումատուն

41. Դիմումատուն պնդել է, որ 3-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածները կիրառելի են իր գործի նկատմամբ և որ իրեն արդարացի փոխհատուցման տրամադրումն այդպիսով առաջնային կարևորության խնդիր է: Ներողությունը, որը նա ստացել է Գլխավոր դատախազությունից, չէր կարող լուրջ ընկալվել, քանի որ պաշտոնական գրության հետ միասին Գլխավոր դատախազն իրեն նվիրել է նաև Ալեքսանդր Դյումայի «Կոմս Մոնթե-Քրիստո» գրքի օրինակը: Ցանկացած դեպքում, դժվարությունները, հոգեկան և սուր ֆիզիկական ցավը, որոնք պատճառվել են իրեն հինգ ու կես տարի, արժանի են ավելի ողջամիտ փոխհատուցման, քան պարզապես

ներողությունը: Ավելին, իր ազատագրկման ընթացքում ամեն տարի՝ սեպտեմբերի 1-ին, Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը հեռարձակել է Հայաստանի ոստիկանության կողմից պատրաստված մի հաղորդում, որտեղ հայտարարվել է, որ ինքն ընդունել է իր մեղքը: Այսպիսով, նա շարունակաբար վարկաբեկվել է հասարակության աչքերում, և իր արդարացումից հետո իշխանությունների կողմից որևէ քայլ չի ձեռնարկվել իր համբավը վերականգնելու համար: 2007 թվականին նա ամուսնացել է, բայց դեռևս չի կարողանում երեխա ունենալ: Բժիշկները դա կապում են իր ազատագրկման պայմանների հետ: Նրա մոտ նաև ականջներին հասցված հարվածների հետևանքով առաջացել է ձախ ականջի թմբկաթաղանթի լորձաթաղանթի միջին հատվածի բորբոքում և առաջին-երկրորդ կարգի երկկողմանի նեյրոսենսորային թերլսողություն: Նա դեռ օգտագործում է ցավազրկողներ, և նրա լսողությունը անվերականգնելի է: Այս ամենի համար ներպետական դատարանների կողմից չի տրամադրվել որևէ փոխհատուցում՝ բացի վատ վերաբերմունքի զրո հառնալու մասին փաստի արձանագրումից: Եվ վերջապես, Կառավարության այն փաստարկը, որ իր ձերբակալումն իրականացվել է 5-րդ հոդվածի պահանջներին համապատասխան և հիմնված է եղել հիմնավոր կասկածի վրա, անընդունելի է, քանի որ իր վրա հստակորեն տեսանելի են եղել վատ վերաբերմունքի հետքերը: Ավելին, նա դատարանում համառորեն հրաժարվել է ընդունել իրեն առաջադրված մեղադրանքները և իր դատապարտումը բողոքարկել է ավելի բարձր դատական ատյաններում:

2. Դատարանի գնահատականը

42. Դատարանն անհրաժեշտ է համարում առաջին հերթին անդրադառնալ Կոնվենցիայի 13-րդ հոդվածի, թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածի և այնուհետև Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի ներքո բերված գանգատներին:

(ա) Կոնվենցիայի 13-րդ հոդված

43. Դատարանը ևս մեկ անգամ նշում է, որ համապատասխան իրավազրության բացակայության պայմաններում Դատարանն իրավասու չէ քննել ոստիկանությունում դիմումատուի նկատմամբ ցուցաբերված վերաբերմունքի հանգամանքները, որպեսզի պարզի, թե արդյոք պահպանվել են Կոնվենցիայի 3-րդ հոդվածի պահանջները (տե՛ս ստորև՝ §§ 55-57): Այնուամենայնիվ, Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի մեկ

այլ դրույթի փաստացի խախտման առկայությունը չի կարող 13-րդ հոդվածի կիրառման նախապայման հանդիսանալ: 13-րդ հոդվածը երաշխավորում է ներպետական մակարդակում իրավական պաշտպանության այնպիսի միջոցի հասանելիությունը, որն ունակ է կենսագործելու Կոնվենցիոն իրավունքների և ազատությունների բովանդակությունը՝ անկախ ներպետական իրավական համակարգում դրանց ամրագրման եղանակից: Այսպիսով, 13-րդ հոդվածի կիրառման համար բավարար է, որ անձն ունենա Կոնվենցիայի իմաստով փաստարկելի պահանջ (տե՛ս Boyle and Rice v. The United Kingdom, 1988 թվականի ապրիլի 27, § 52, սերիա Ա , թիվ 131):

44. Դատարանը նշում է, որ ոստիկանների կողմից դիմումատուի նկատմամբ ցուցաբերված վատ վերաբերմունքի փաստն անհերքելիորեն հաստատվել է ներպետական դատարանների կողմից, մասնավորապես՝ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2005թ. հունիսի 15-ի դատավճռով, համաձայն որի՝ դատապարվել են դեպքին մասնակից ոստիկաններից երկուսը (տե՛ս վերևում՝ §18): Հետևաբար, Դատարանը գտնում է, որ 13-րդ հոդվածի ներքո դիմումատուն ներպետական դատարաններում անկասկած ունեցել է փաստարկելի պահանջ՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածով արգելված վերաբերմունքի ենթարկվելու համար:

45. Ոստիկանների դատապարտումից հետո դիմումատուն առանձին դատավարական կարգով ներկայացրել է փոխհատուցման քաղաքացիական հայց՝ այդ թվում նաև վատ վերաբերմունքի համար՝ պահանջելով ոչ նյութական վնասի հատուցում (տե՛ս վերևում՝ § 22): Այնուամենայնիվ, ոչ նյութական վնասի հատուցում դիմումատուին չի տրվել, քանի որ փոխհատուցման այդ տեսակը նախատեսված չի եղել ազգային օրենսդրությամբ:

46. Հետևաբար հարց է առաջանում՝ արդյո՞ք այս համատեքստում 13-րդ հոդվածը պահանջում է, որպեսզի նմանատիպ փոխհատուցումը հասանելի լինի: Դատարանը համապատասխան գործերով բավարարում է արդարացի փոխհատուցման պահանջը՝ ցավը, լարվածությունը, անհանգստությունը և հիասթափությունը ճանաչելով որպես ոչ նյութական վնասի փոխհատուցման հիմք: Ավելի վաղ արձանագրվել է, որ Կոնվենցիայի առավել հիմնարար դրույթներ հանդիսացող 2-րդ և 3-րդ հոդվածների խախտման դեպքում խախտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի փոխհատուցումը պետք է սկզբունքորեն հասանելի լինի իրավական պաշտպանության հնարավոր միջոցների շարքում (տես վերը հիշատակված Keenan-ի գործով վճիռը, § 130, և Kontrova'-ի գործով վճիռը, § 64):

47. Տվյալ դեպքում Դատարանը եզրահանգում է, որ դիմումատուն պետք է հնարավորություն ունենար դիմելու վատ վերաբերմունքի հետևանքով

իրեն պատճառված ոչ նյութական վնասի հատուցման համար: Քանի որ Հայաստանի օրենսդրությամբ նման հատուցում չի նախատեսում, դիմումատուին զրկված է եղել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցից:

48. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում:

(բ) Կոնվենցիային կից թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդված

49. Դատարանը վերահաստատում է, որ թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածի նպատակն է փոխհատուցում տրամադրել այն անձանց, ովքեր դատապարտվել են դատական սխալի հետևանքով այն դեպքերում, երբ դատավճիռը բեկանվել է ներպետական դատարանի կողմից՝ նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիմքով: Հետևաբար, թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածը կիրառելի չէ, քանի դեռ դատավճիռը չի բեկանվել (տես Matveyev v. Russia, թիվ 26601/02, §§ 38-39, 2008թ. հուլիսի 3):

50. Քանի որ տվյալ դեպքում դիմումատուի նկատմամբ կայացված դատավճիռը բեկանված էր, և նա փոխհատուցում ստանալու համար դիմել էր Հայաստանում թիվ 7 Արձանագրության ուժի մեջ մտնելու օրվանից՝ 2002թ. հուլիսի 1-ից հետո, ուստի *ratione temporis* իրավասության պայմանները համարվում են բավարարված: Ավելին, Դատարանը կասկած չունի, որ այս հոդվածը կիրառելի է դիմումատուի դեպքում, քանի որ դրա համար անհրաժեշտ բոլոր պայմաններն առկա են:

51. Ինչ վերաբերվում է թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածով նախատեսված երաշխիքներին համապատասխանության հարցին, ապա Դատարանը գտնում է, որ թեև այս դրույթը երաշխավորում է փոխհատուցման տրամադրումը համապատասխան երկրի օրենսդրությանը կամ պրակտիկային համապատասխան, դա չի նշանակում, որ փոխհատուցում չի վճարվում, եթե ներպետական օրենսդրությունը կամ պրակտիկան չեն սահմանում նման փոխհատուցման վերաբերյալ դրույթներ (տե՛ս նաև թիվ 7 Արձանագրության բացատրական զեկույցի § 25-ը, վերևում՝ § 30): Բացի դրանից, Դատարանը գտնում է, որ թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածի նպատակը ոչ միայն սխալ դատապարտման դեպքում նյութական վնասի վերականգնումն է, այլ նաև դատական սխալի հետևանքով դատապարտված անձին փոխհատուցման տրամադրումն է ցանկացած ոչ նյութական վնասի, օրինակ՝ տազնապի, անհանգստության, անհարմարության և կյանքի նկատմամբ հետաքրքրության կորստի համար: Նման փոխհատուցում դիմումատուին տվյալ գործով, այնուամենայնիվ, չի տրվել:

52. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածի խախտում:

(գ) Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետ

53. Դատարանը նշում է, որ այս պահանջը կապված է վերևում ուսումնասիրված պահանջների հետ, ուստի պետք է նմանապես ընդունելի ճանաչվի:

54. Հաշվի առնելով թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածի վերբերյալ իր դիրքորոշումը (տե՛ս վերևում՝ § 52)՝ Դատարանը գտնում է, որ անհրաժեշտություն չկա քննել, թե արդյո՞ք այս գործով տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԱՅԼ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

42. Դիմումատուն գանգատվել է նաև, որ իր նկատմամբ վատ վերաբերմունքը, անօրինական ձերբակալումն ու կալանքը և անարդարացի դատապարտումը խախտել են 3-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածներով սահմանված երաշխիքները:

43. Դատարանը վերահաստատում է, որ, միջազգային իրավունքի ընդհանուր նորմերի համաձայն, Կոնվենցիայի դրույթները պարտադիր չեն Պայմանավորվող կողմի համար այն գործողությունների կամ փաստերի կամ այնպիսի իրավիճակների մասով, որոնք տեղի են ունեցել մինչև տվյալ կողմի նկատմամբ Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը (տե՛ս *Blečić v. Croatia* [GC], թիվ 59532/00, § 70, ՄԻԵԴ 2006-III): Դատարանն արձանագրում է, որ գանգատի առարկա դարձած իրադարձությունները տեղի են ունեցել Հայաստանի նկատմամբ Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվանից, մասնավորապես՝ 2002 թվականի ապրիլի 26-ից առաջ:

44. Վերը շարադրվածից հետևում է, որ գանգատի այս հատվածը *ratione temporis* անհամատեղելի է Կոնվենցիայի դրույթներին 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով և 35-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն պետք է մերժվի:

45. Վերջապես, դիմումատուն նույն հոդվածի ներքո բողոքել է այն մասին, որ նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ իր պահանջն ամբողջությամբ չի բավարարվել:

46. Հաշվի առնելով իր տրամադրության տակ գտնվող բոլոր նյութերը և այս գանգատի վերաբերյալ իր դատազորության սահմանները՝ Դատարանը գտնում է, որ այդ նյութերով չի բացահայտվում Կոնվենցիայով կամ դրան կից Արձանագրություններով սահմանված իրավունքների և

ազատությունների խախտման որևէ առերևույթ դեպք: Հետևաբար, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ գանգատի այս մասը պետք է մերժվի՝ ակնհայտորեն անհիմն լինելու հիմքով:

IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

47. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը սահմանում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնասը

48. Դիմումատուն պահանջել է 34,000,000 ՀՀ դրամ՝ որպես նյութական վնասի փոխհատուցում, որը ներառում է իր ծախսերը և բաց թողնված օգուտը: Նա ավելի ուշ պահանջել է 274,959 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

49. Կառավարությունը հայտնել է, որ նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ դիմումատուի պահանջը պատշաճ չի հիմնավորվել և, ըստ էության, արդեն իսկ բավարարվել է ներպետական դատարանների կողմից, և որ ոչ նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ նրա պահանջը անհիմն է:

50. Դատարանը չի տեսնում որևէ պատճառհետևանքային կապ արձարագրված խախտումների և պահանջվող նյութական վնասի միջև, հետևաբար Դատարանը մերժում է այդ պահանջը: Մյուս կողմից, Դատարանը դիմումատուին տրամադրում է 30,000 եվրո՝ որպես պատճառված ոչ նյութական վնասի փոխհատուցում:

Բ. Ծախսեր և ծախքեր

51. Դիմումատուն նաև պահանջել է 1,000,000 ՀՀ դրամ Դատարանում կրած ծախսերի և ծախքերի փոխհատուցման համար՝ ներառյալ իրավաբանական, թարգմանության և փոստային ծախսերը:

52. Կառավարությունը հայտնել է, որ ծախսերի և ծախքերի փոխհատուցման դիմումատուի պահանջն ամբողջովին չի հիմնավորվել:

53. Համաձայն Դատարանի նախադեպային իրավունքի՝ դիմումատուին տրամադրվում է ծախսերի ու ծախքերի փոխհատուցում միայն այն դեպքում, երբ ցույց է տրվում, որ դրանք իրականում կատարվել են, եղել են

անհրաժեշտ և ողջամիտ իրենց ծավալներով: Սույն գործում, հաշվի առնելով իր տրամադրության տակ գտնվող փաստաթղթերը և վերևում նշած չափանիշները, դատարանը նպատակահարմար է գտնում տրամադրել 500 եվրո գումար՝ որպես Դատարանում կրած ծախսերի և ծախքերի փոխհատուցում:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

Դատարանը նպատակահարմար է գտնում, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխառության տրամադրման առավելագույն տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոս:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ՝ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ.

1. Հայտարարում է դիմումատուի բողոքները՝ ոչ նյութական վնասի փոխհատուցման պահանջը մերժելու մասով ընդունելի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի և 13-րդ հոդվածի, և Կոնվենցիային կից թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածի ներքո, իսկ գանգատի մնացած մասը՝ անընդունելի:
2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում,
3. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիային կից թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածի խախտում,
4. Վճռում է, որ որ անհրաժեշտություն չկա գանգատը քննել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի ներքո,
5. Վճռում է, որ՝
 - ա) պատասխանող Պետությունը, Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն վճիռն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում դիմումատուին պետք է վճարի հետևյալ գումարները.
 - (i) 30,000 եվրո (երեսուն հազար եվրո)՝ գումարած նշված գումարի վրա հաշվարկվող որևէ տեսակի հարկեր՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում,
 - (ii) 500 (հինգ հարյուր եվրո) եվրո՝ գումարած նշված գումարի վրա դիմումատուին վճարվող գումարից գանձման ենթակա բոլոր տեսակի հարկերը որպես ծախսերի և ծախքերի փոխհատուցում,
 - բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո մինչև վճարման օրը պետք է վճարվի վերը նշված գումարի պարզ տոկոս՝ Եվրոպական կենտրոնական բանկի կողմից փոխառության տրամադրման համար

սահմանված առավելագույն տոկոսադրույքի չափով, պարտավորությունների չկատարման ժամանակահատվածի համար՝ գումարած երեք տոկոս:

8. Մերժում է դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով, գրավոր կերպով ծանուցվել է 2012 թվականի հունիսի 12-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի:

Սանտիագո Քեսադա
Քարտուղար

Ջոզեփ Կասադեվալ
Նախագահ